Բ. ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԵՐԳԵՐ

1. ՇԵՄՔԻԿ, ՄԻ՛ ԺԱԺԱ

Շեմքի՛կ, մի՛ ժաժա,
Ես իմ ժաժալու,
Շուշան տանելու։

Տախտի՛կ, մի՛ թնդա,
Ես իմ թնդալու,
Շուշան տանելու։

Ծառո՛ւկ, մի՛ դողա,
Ես իմ դողալու,
Շուշան տանելու։

Տե՛րև, մի՛ թափի,
Ես իմ թափելու,
Շուշան տանելու։

Ա՛րև, մի՛ պատի,
Ես իմ պատելու,
Շուշան տանելու։

Լուսի՛ն, մի՛ պատի,
Ես իմ պատելու,
Շուշան տանելու։

Կոռ՛ունկ, մի՛ կռա,
Ես իմ կռալու,
Շուշան տանելու։

Ասաղե՛ր, մի՛ ցոլաք,
Ես իմ ցոլալու,
Շուշան տանելու։

2. ԽԱՐԵՑԻՆ

Զհերիկ խաբեցին կուռե մե գինով,
Զմերիկ խաբեցին թոփիկ մե շիլով,
Զաղբեր խաբեցին ջուխտակ մե ջզմով,
Զքուրիկ խաբեցին մատիկ մե հինով,
Զդրամի հանգուրց արձրկեցին,
Զաղջիկ մամուց ջոկեցին։
Մե՛րիկ, մի՛ ուվլի ղտախտիկ,
Որ չավրի քու աղջկա հեատիկ,
Թըղ մնա քրդի նմուշիկ,
Որ հանիս քու սրտի հասրաթիկ։
Զչամիչ մաղով մտզեցին.
Զաղջկա ջեբեր լցեցին,
Զխարիբ ճամպա դրեցին։

3. ՓԵՍԻ ԴՈՎՔ

Թագվոր բարով, հազա՛ր բարով,
Հա՛յ, հազա՛ր բարով.
Դու վարդ իս կանանչ տերևով,
Աստված ղէն քու արևն օրշնե՝
Էրկնուց գետնուց զորութենով։
Թագվոր բարով, հազա՛ր բարով,
Հա՛յ, հազա՛ր բարով.
Դու վարդ իս կանանչ տերևով,
Աստված ղէն քու արևն օրշնե՝
Յերուսաղեմա զորութենով։
Թագվոր բարով, հազա՛ր բարով,
Հա՛յ, հազա՛ր բարով.
Դու վարդ իս կանանչ տերևով,
Աստված ղէն քու արևն օրշնե՝
Էջմիածնա զորութենով։
Թագվոր բարով, հազա՛ր բարով,
Հա՛յ, հազա՛ր բարով.
Դու վարդ իս կանանչ տերևով,
Աստված ղէն քու արևն օրշնե՝
Սրբ Կարապետու զորութենով։

4. ՓԵՍԻ ԴՈՎՔ

Մեր թագվորն էր աջ, խաչկոթ խաչ ու մաչ,
Բինիշն էր կարմիր, արևն էր կանանչ.
Մեր թագվորն էր աջ, խաչկոթ խաչ ու մաչ,
Պսակն էր կարմիր, արևն էր կանանչ։
Կանչեք բերեք զթագվորահեր,
Որ գիկեր շորորն ի ծառին,
Մնդրիկ զարկեր սուրբ սեղանին,
Խերն ու բարին մեր թագվորին։
Կանչե՛ք բերեք զթագվորամեր,

Որ դիկեր շորորն ի ծառին,
Մնդրիկ զարկեր սուրբ սեղանին,
Խերն ու բարին մեր թաղվորին։
Կանչե՛ք բերեք դթաղվորաքուր,
Որ դիկեր շորորն ի ծառին,
Մնդրիկ զարկեր սուրբ սեղանին,
Խերն ու բարին մեր թաղվորին։
Կանչե՛ք բերեք դթաղվորաղրեր,
Որ դիկեր շորորն ի ծառին,
Մնդրիկ զարկեր սուրբ սեղանին,
Խերն ու բարին մեր թաղվորին։

5. ՀՈՐԴՈՐԱԿ

Մեր թաղվորին ծաղիկ ոիտեք ծաղկունաց,
Ծաղիկն էլ ընչենի՞ պիտեր ծաղկունաց,
Ծաղիկն էլ խնկենի պիտեր ծաղկունաց,
Որ փթփթեր ճուղն ու տերև հրտ իրաց,
Զէ՛ն քաղինք բերինք թագվորին ծաղկունաց։
Մեր թաղվորին ծաղիկ պիտեր ծաղկունաց,
Ծաղիկն էլ ընչենի՞ պիտեր ծաղկունաց,
Ծաղիկն էլ նշենի պիտեր ծաղկունաց,
Որ փթփթեր ճուղն ու տերև հրտ իրաց,
Զէ՛ն քաղինք բերինք թագվորին ծաղկունաց։
Մեր թագվորին ծաղիկ պիտեր ծաղկունաց,
Ծաղիկն էլ ընչենի՞ պիտեր ծաղկունաց,
Ծաղիկն էլ վարդենի պիտեր ծաղկունաց,
Որ փթփթեր ճուղն ու տերև հրտ իրաց,
Զէ՛ն քաղինք բերինք թաղվորին ծաղկունաց։
Մեր թագվորին ծաղիկ պիտեր ծաղկունաց,
Ծաղիկն էլ ընչենի՞ պիտեր ծաղկունաց,
Ծաղիկն էլ նոնենի պիտեր ծաղկունաց,
Որ փթփթեր ճուղն ու տերև հրտ իրաց,
Զէ՛ն քաղինք բերինք թագվորին ծաղկունաց։

6. ՀՈՐԴՈՐԱԿ

Մեր թագվորին ի՞նչ պիտեր.
—Թաֆթաս շապիկ մե պիտեր։
Մեր թագվորին ի՞նչ պիտեր.
—Խութնի էլակ մե պիտեր։
Մեր թագվորին ի՞նչ պիտեր.
—Թուսի գոտի մե պիտեր։
Մեր թաղվորին ի՞նչ պիտեր.
—Հաղու աբև մե պիտեր։
Մեր թաղվորին ի՞նչ պիտեր.
—Ջուխտակ չզմե մե պիտեր։
Մեր թագվորին ի՞նչ պիտեր.
—Դիք արախչի մե պիտեր։
Մեր թագվորին ի՞նչ պիտեր.
—Տնու կաքվուկ մե պիտեր։

7. ՀՈՐԴՈՐԱԿ

Էն ճամպով օր դու կէրթաս՝
Քար քաղած, ավաղ մաղած.
Էն դետով օր դու ղընցնաս՝
Գետ՝ զինի՝ կարմունչն՝ օսկի։

8. ՏԱՐԱՆ, ԹԸ՛Ղ ՏԱՆԻՆ

Տարան, թը՛ղ տանին Զնդրլիկ,
Զատկին կը բերին, Զնդրլիկ,
Կանանչ մոմերով, Զնդրլիկ,
Կարմիր սոլերով, Զնդրլիկ,
Անուշ հոտերով, Զնդրլիկ,
Պզտիկ տոտերով, Զնդրլիկ,
Սիվտակ փաչեքով, Զնդրլիկ,
Սրսուռ լաչակով, Զնդրլիկ,
Նխշուն միզարով, Զնդրլիկ,
Նազ ու տուզերով, Զնդրլիկ,
Տարան, թը՛ղ տանին, Զնդրլիկ,
Զատկին կը բերին, Զնդրլիկ։

9. ՀՈՐԴՈՐԱԿ

Թաղվորի մեր, դո՛ւս արի,
Տե՛ս, քըզի ի՛նչ ինք բերի,
Քըզի քֆրող ինք բերի,
Գլուխ քթվող ինք բերի,
Քըզի բամբող ինք բերի,
Լվացք էրող ինք բերի,
Գրդնակ էրող ինք բերի,
Քու տախտ ավլող ինք բերի,
Քու ծամ յիստկող ինք բերի,
Քու հետ կռվող ինք բերի։

10. ԷԴ ԴԻԶԱՆ, ԲԵԴ-ԲԵԴ ԴԻԶԱՆ

Էդ դիզան, բեդ-բեդ դիզան՝ տեսեք էն ո՞րն է.
Էդ դիզան, բեդ-բեդ դիզան՝ զեղի ռեսներն են։
Կոընկներ կոկոալեն՝ տեսեք էն ո՞րն է.
Կոընկներ կոկոալեն՝ սարկավըրգներն են։
Էդ հավքեր գխվըխալեն՝ տեսեք էն ո՞րն է,
Էդ հավքեր գխվըխալեն՝ էն աղջըկներն են։
Ճշնարոս ճլվլալեն՝ տեսեք էն ո՞րն է,
Ճշնարոս ճլվլալեն՝ էն նորհարսներն են։
Շունն էկավ պարկն ի բերան՝ տեսեք էն ո՞րն է,
Շունն էկավ պարկն ի բերան՝ գեղի գզիրն է։
Ցախավել յետև դռան՝ տեսեք էն ո՞րն է,
Ցախավել յետև դռան՝ գզրի կնիկն է։